
ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՄԱՐԻԱՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

IX դարում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունը՝ հայոց պետականության վերականգնումը, անմիջականորեն կապված է հայ իշխանական տներից մեկի՝ Բագրատունիների անվան հետ: Բագրատունիների իշխանական տան պատմությունը լուսաբանվել է տարբեր՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր և մշակութային առումներով: Իշխանական տան պատմության առավել ամբողջական ուսումնասիրության համար առանձնակի կարևոր է նաև Բագրատունիների ծագման խնդրի քննությունը: Ե՞րբ և որտե՞ղից հայտնվեցին Բագրատունիները, ո՞վ էր նրանց նախահայրը կամ առաջին Բագրատունին, որո՞նք էին նրանց նախնական բնակության տարածքները, ի՞նչ պաշտոններ էին զբաղեցնում և ի՞նչ դեր ու նշանակություն ունեին երկրի քաղաքական կյանքում: Այս հարցերի ուսումնասիրությունը եղել է ոչ միայն հայ պատմաբանների, այլև հայագիտությամբ զբաղվող օտարազգի մասնագետների ուշադրության կենտրոնում: Վերջիններիս հայտնած տեսակետները փորձել ենք հնարավորինս ներկայացնել ժամանակագրական հաջորդականությամբ՝ հիմնական շեշտը դնելով միանման տեսակետների խմբավորման և ապա համապատասխան եզրահանգումներ կատարելու վրա:

Բագրատունիների ծագման վերաբերյալ գիտական գրականության մեջ առկա են տարբեր տեսակետներ, ինչը պայմանավորված է իշխանական տոհմի ծագմանը վերաբերող վկայությունների երկվության: Մասնագետները տարբեր կերպ են ըմբռնել և բացատրել այդ տվյալները: Այդ մեկնաբանությունները հիմնված են մի շարք լուրջ գիտական փաստերի վրա, որոնցից յուրաքանչյուրն, իր հերթին, առանձին ուսումնասիրության նյութ կարող է լինել: Խնդրո առարկա հարցի աղբյուրագիտական հենքը Մովսես Խորենացու¹ և Անանունի² պատմություններն են: Բագրատունիների ծագմանը Խորենացին առաջին անգամ անդրադառնում է հայոց Հրաչյա թագավորի մասին հիշատակելիս, վերջինս Պարույր նահապետի որդին էր և Ասորեստանի Նաբուգոդոնոսոր Բ (Ք.ա. 605–562 թթ.) թագավորի ժամանակակիցը. «Սա Հրաչեայ կոչի վասն առաւել պայծառերես և բոցակնագոյն իմն լինելոյ: Առ սովաւ ասեն կեցեալ զՆաբուգոդոնոսոր արքայ Բաբելացոց, որ գերեց զՀրեայս: Եւ սորա ասեն զմի ի գլխաւորաց Երրայեցոցն գե-

¹ Մ ո վ ա է ա Խ ո թ ե ն ա ց ի. Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և Ներածութիւնը Մ. Արեղյանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Սարգսյանի (այսուհետև՝ Մ ո վ ա է ա Խ ո թ ե ն ա ց ի), Երևան, 1991:

² Անանունի պատմության այս հատվածը կցված է Սեբեոս պատմիչի Պատմությանը, Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի (այսուհետև՝ Ս ե բ է ո ս), Երևան, 1979:

րելոց խնդրեալ ի Նաբուգոդոնոսորայ՝ Շամբաթ անուն, ածեալ բնակեցոյց յերկրիս մերում մեծաւ պատուով. և ի սմանէ ասէ պատմագիրն լինել զազգն Բագրատունեաց, և հաւաստի է՝³: Բագրատունիների «հրեական ծագման» մասին պատմահայրը վկայում է բազմիցս, և այն առավել համոզիչ դարձնելու նպատակով իշխանական տոհմում ընդունված անուններին վերագրում է եբրայական (հրեական) ծագում՝ հատկապես առանձնացնելով Շամբատ անվանումը, որն, ըստ նրա, համարժեք էր Բագրատունիների մոտ հաճախ հանդիպող Սմբատ անվանը: Հաջորդ անգամ, Բագրատունիներին Խորենացին հիշատակում է՝ հանձին «Շամբատայ Բագրատի», որին Վաղարշակ (Տրդատ Ա Արշակունի – Մ. Գ.) թագավորը բացի այն, որ իրավունք էր շնորհել ժառանգաբար՝ լինել թագադիր Արշակունիներին, կարգել էր նաև Հայաստանի արևմտյան մասում «կողմնակալ, բյուրերի և հազարների իշխան»⁴: Այս պաշտոններից գատ, Տրդատի Ա-ի (66–88 թթ.) հրամանով Բագրատից սերած ցեղը նրա անունով պետք է կոչվեր «Բագրատունի»: Բագրատը իրավունք էր ստացել նաև ասպետ տիտղոսը, ինչպես նա արքունիքում և թագավորի տանը շրջելիս մանր մարգարիտներից երեք փուլ վարսակալ կրել՝ առանց ոսկու և (թանկագին) քարերի⁵: Խորենացին մերժում է Բագրատունիների՝ Հայկ նահապետից սերված լինելը. «Քանզի ասելն ոմանց անհաւաստի մարդոց, ըստ յօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան, ի Հայկայ զթագադիր ազգո Բագրատունեաց լինել: Վասն որոյ ասեմ. մի այսպիսեաց յիմար բանից հավանիր. զի և ոչ մի շաւիղ կամ ցուցումն գոյ նմանութեան յասացեալսոյ՝ որ զարդարութիւն ակնարկէ. զի իբայ բանից և անոճ իմն յաղագս Հայկայ և նմանեացն կակազէ»⁶: Խորենացու կողմից սույն տեսակետի վկայությունը, չնայած Բագրատունիների հայկական ծագման վերաբերյալ նրա ունեցած ժխտողական մոտեցմանը, խոսում է այն կարևորելու և ժամանակին ունեցած լայն շրջանառության մասին: Բագրատունիների ծագման վերաբերյալ Խորենացու հաղորդած տեղեկությունները սահմանափակվում են այսքանով, թեպետ դա էլ բավարար էր, որ այն հանդիսանար հայագետների մի քանի սերունդների ուսումնասիրության առարկան:

Իշխանական տոհմի ծագման վերաբերյալ հաջորդ վկայությանը հանդիպում ենք Անանունի մոտ, համաձայն որի՝ Բագրատունիները սերել են Հայկ նահապետի սերնդից. «Եւ տիրէ ի վերայ նոցա (հայերի – Մ. Գ.) Զարեհ որդի որդոց Արամենակայ, այր զաւրաւոր և կորուի աղեղամբ. ապա Արմոզ, ապա Սարհանգ. ապա Շաւաշ, ապա Փառնաւագ: Մա ծնաւ զԲագամ և զԲագարատ. և Բագարատ ծնաւ զԲիրատ և Բիրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արևմտից, այսինքն է Անգեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ և Անգեղ, գոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն աստուած կոչե-

³ Մ ն վ ու է ու Խ ո ռ ե ն ա ց ի, էջ 68:

⁴ Տե՛ս Մ ն վ ու է ու Խ ո ռ ե ն ա ց ի, էջ 104–105:

⁵ Նույն տեղում, էջ 104–105, 110:

⁶ Նույն տեղում, էջ 68–69:

ցին»⁷: Անանունի մոտ հանդիպում ենք նաև Արամանյակի տոհմից սերած Բագարատ Փառագյանին. «Մնա (Արշակ Փոքր – Մ. Գ.) ընդ առաջ ելանէ Բագարատ Փառագեան յորդուցն Արամենակայ նախարար մեծ հանդերձ գաւրու: Մատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ. և նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականակուռ գահոյիցն. և տայ զդրուստր իւր ի կնութեան»⁸:

Յավոք, ժամանակագրական առումով առավել վաղ ապրած պատմիչներ Ագաթանգեղոսն և Փ. Բուզանդը որևէ տեղեկություն չեն հաղորդում Բագրատունիների ծագման վերաբերյալ: Վերջիններս նրանց հիշատակում են սուկ իբրև «թագադիր» և «ասպետ» տիտղոսակիրների⁹:

Բագրատունիների ծագման կամ առաջին Բագրատունիների վերաբերյալ տեղեկությունները չեն սահմանափակվում միայն հայ պատմիչների հաղորդած հիշատակություններով: Նրանցից գատ Բագրատունիների վերաբերյալ վկայում են նաև օտարազգի պատմիչները: Հույն պատմիչ Ապիանոսը հիշատակում է Բագադատին՝ որպես Տիգրան Մեծի գորավար, որից ստացել էր Սելևկյան Ասորիքի կառավարչի պաշտոնը¹⁰: Այս երևույթը վկայում է, որ դեռևս Տիգրան Մեծի ժամանակ Բագրատունիները վստահելի և կարևոր պաշտոն էին զբաղեցնում երկրում: Այս Բագադատին մի շարք մասնագետներ համարում են Բագրատունիների նախահայրը: Նրանցից են նշանավոր գերմանացի արևելագետ-հայագետ Յոզեֆ Մարկվարտը¹¹, ինչպես նաև անվանի գիտնական Նիկողայոս Ադոնցը, որը մեծ ավանդ ունի ոչ միայն Բագրատունիների ծագումնաբանության, այլև իշխանական տոհմի պատմության լուսաբանման գործում: Նա Բագրատունիների հարստության առաջացումը պայմանավորում է հայ-իրանական էթնիկական միահյուսմամբ՝ վկայակոչելով տոհմի անունը և նրանց վերագրված «ասպետ» տիտղոսը: Ադոնցը Բագրատունիների նախնական հայրենիքը համարում է Բագրևանդը, որը գտնվում էր Ասորպատականից ոչ հեռու, իսկ Բագրատունիների նախահայր՝ Տիգրան Մեծի կողմից կուսակալ նշանակված Բագադատին, որը համարժեք է նույն հայկական Բագրատին:

Խորենացու՝ Բագրատունիների հարավից գալու և հրեական ծագման մասին հիշատակումը Ադոնցը կապում է այն իրողության հետ, որ Բագարատը երկար ժամանակ եղել է սեմական ժողովրդով բնակեցված շրջանի (Կիլիկիան և Ասորիքը – Մ. Գ.) կառավարիչ¹²: Ադոնցը մանրամասն քննության է ենթարկում նաև Անանունի հաղորդումները՝ դրանք պայմանավորելով Սուրբ Գրքի ազդեցությամբ, քանզի պատմիչը հիշատակում է նույնքան հայ թագավորներ (Ջարեհ, Արմոզ, Մարիանգ, Շավարշ, Փառնավագ), որքան նույն ժամանակաշրջանում ունեին հրեաները (Եգեկիա, Մանասե, Ամոն, Հովսիա, Հովակիմ): Անհնարին է համարում այն, որ Բագա-

⁷ Մ ե բ է ո ս, էջ 51:

⁸ Նույն տեղում, էջ 54:

⁹ Ագաթանգեղայ Պատմութիւն, Թիֆլիս, 1888, էջ 461, Փ ա Վ ս տ ո ս Բ ո լ զ ա ն ղ Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 126:

¹⁰ Տե ս Հ. Մ ա ն ն ղ յ ա ն. Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 157:

¹¹ J. M a r q u a r t. Eransahr nach der Geographie des Moses Xorenci. Berlin, 1901, S. 174.

¹² Ն. Ա դ ո ն զ. Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 458-459:

րատ Փառագյանը, լինելով ժամանակակիցը Նաբուգոդոնոսոր Բ-ի (Ք.ա. VII դ.), ապրած լինելը Արշակունի թագավորի Մծբին գալու ժամանակ, ինչը տեղի է ունեցել մոտավորապես II դարի կեսերին: Ադոնցը անհավանական է համարում նաև այն, որ Բագարատի որդիները, սերելով Ջարեհից և Փառնավազից, վերոնշյալ անունների փոխարեն կրում են Բագարատ անունը: Ըստ Ադոնցի՝ Անանունի հիշատակած Ջարեհը կարող է հիշեցնել Ծովքի թագավորության հիմնադիր Ջարիադրիսին, որի անվան պարթևական տարբերակը Ջարեհն է: Մյուս կողմից Ջարեհը կարող էր կրել իրանական Ջարիադր հերոսի ստվերը, որը Վշտասպի եղբայրն էր և թագավորել էր Մարաստանի ու ստորին երկրների վրա, իսկ նրա եղբոր՝ վերոհիշյալ Ջարիադրի իշխանության տակ էին գտնվում Կովկասյան երկրները՝ Կասպից պահակից վեր՝ մինչև Տանայիս (Դոն) գետը: Բայց նա ավելի հավանական է համարում և Մարկվարտի հետ կիսում այն տեսակետը, համաձայն որի Ջարեհը Անանունին հայտնի է եղել Բագավանի մոտ գտնվող Ջարեհ ավանից: Ադոնցը նույն կերպ է մեկնաբանում նաև Բագամ և Շավարշ կամ Շավաշ անունները՝ առաջինը կապելով Բագավանի, իսկ երկրորդը՝ Շավարշանի հետ: Առանձնակի ուշադրություն չդարձնելով Սարհանգ անվանը՝ (պարսկերեն՝ հերոս) անդրադառնում է Արմոզ և Փառնավազ անուններին: Արմոզը նույնացնում է վրացական Արտոզի հետ, որը Վրաստանի թագավորն էր և Տիգրան Մեծի (Ք. ա. 95–55 թթ.) ժամանակակիցը, իսկ Փառնավազը՝ Տիգրան Մեծի որդի Արտավազդի (Ք. ա. 55–34 թթ.): Ադոնցի կարծիքով ևս մեկ Փառավազ հավանաբար գոյություն է ունեցել այս Փառնավազից առաջ: Բայց նա կարծում է, որ Անանունն այդ անվանը ծանոթ է Փավստոս Բուզանդից: Վերջինիս մոտ Փառնավազն ընկալվում է որպես վրացական թագավորական տուն: Փառնավազին Անանունի կողմից որպես Բագարատի հայր ներկայացնելու հիմքում կարող էր ընկած լինել այն հանգամանքը, որ Անանունը հաճախ աշխարհագրական մերձավորությունը վերածում է ցեղականի՝ նկատի ունենալով Բագրատունիների սեփականություն հանդիսացող Սպեր գավառը, որի միջոցով, ըստ Ադոնցի, հայկական և վրացական հողերը սահմանակցում են¹³:

Ադոնցի տեսակետին, որ Բագրատունիների նախահայրը Կիլիկիայի և Ասորիքի կառավարիչն է, համաձայն է նաև Լեոն՝ վերագրելով վերջիններիս բացառապես հայկական ծագում, իսկ Բագրատունիների նախնական բնակության վայրը համարում է Կոգովիտը: Ինչ վերաբերում է Խորենացու հիշատակմանը, ապա Լեոն այն պայմանավորում է Մամիկոնյանների և Բագրատունիներ անընդմեջ շարունակվող մրցությամբ¹⁴: Այս կերպ պատմահայրը փորձել է Բագրատունիներին առավել հին ծագում վերագրել: Խորենացու այս հնարավոր հավակնության մասին ժամանակին տեսակետ է արտահայտել նաև բանասեր Գ. Խալաթյանցը, թեպետ, հեղինակը առավել հակված էր կարծելու, որ այդ միտումը առաջացել է Անանունի մոտ, և միայն հետո փոխանցվել՝ Խորենացուն: Խալաթյանցի կարծիքով՝ Անանունը ամբողջությամբ գտնվել է Աստվածաշնչի ազդեցության տակ,

¹³ Ն. Ա. Պ. Ն. և Գ. Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 495–501:

¹⁴ Լ. և Ն. Երկեր, հ. Բ, Երևան, 1967, էջ 490–491:

քանի որ Բագարատ անվան մեկ այլ ձևին՝ Փաքարատին, հանդիպում ենք Աստվածաշնչում «որդիք Փաքարատ», Նեեմիի գրքում՝ Պակարատ, (վերջինիս անունը նշված էր Նաբուգոդոնոսորի բաբելոնյան գերությունից վերադարձած Բարայելի որդիների ցուցակում) ինչպես նաև Եզրի 2-րդ գրքում՝ Փաքերոթ կամ Փաքերովթ տարբերակով¹⁵: Մակայն վերոհիշյալ տեսակետը արժանացավ Ասլան Շահնագարյանի քննադատությանը: Նա, Խալաթյանցի այդ տեսակետը պայմանավորեց այն հանգամանքով, որ վերջինս դասվում էր այն ծայրահեղ բանասերների շարքին, ովքեր փորձում էին փաստել, որ Խորենացին ապրել է VIII դարի վերջին կամ IX դարի սկզբին, հետևապես հավանական էր, որ օգտված լիներ Անանունից: Մինչդեռ, Շահնագարյանը, փաստելով Խորենացու մեծությունը, ամբողջությամբ հերքեց այդ տեսակետը¹⁶:

Բացի այդ, Խալաթյանցը նմանություն, գուցե և նույնություն էր տեսնում Անանունի Բագարատ Փառագյանի և Խորենացու մոտ հանդիպող, թագադիր և ասպետ տիտղոսները կրող, թագավորին դիմավորող Շամբատ Բագարատի միջև: Առկա միակ տարբերությունը, ըստ հեղինակի, այն է, որ Խորենացին Բագարատին սերած է համարում հրեա Շամբատից, մինչդեռ Անանունը Բագրատունիներին վերագրում է հայկական ծագում: Անտոն Գարագաշյանն առաջիններից մեկն էր, ով, վերլուծության ենթարկելով Բագրատունիների անունները (Բագարատ՝ աստվածատուր, Սմբատ՝ արծաթ (սիմ) և պատ (շեն), վարազ հաղթող, որը համարժեք է Սասանյանների Պերոզ անվանը, իսկ բարդված ձևերն են Վարագոտիրոց, Վարագվազան, Վարագդատ և այլն) ժխտեց դրանց եբրայական լինելը՝ վերագրելով արիական ծագում: Պատմաբանը Բագրատունիների հրեական ծագման վերաբերյալ նկատում է հակադրություն հենց Խորենացու հիշատակություններում: Խոսքը վերաբերում է Բագրատունի Ենանոսի և Գնթունի նահապետ Ջորայի միջև ծագած տարաձայնությանը: Համաձայն այդ վկայությունների, Ենանոսը, ապստամբելով թագավորի դեմ, փորձում էր հանձնել Ջորայի գտնել դաշնակցի, վերջինս, սակայն, առարկում է Բագրատունի Ենանոսին՝ միաժամանակ հերքելով իրենց պաղեստինցի (հրեա) լինելը¹⁷: Գարագաշյանի մոտ հանդիպում ենք այն տեսակետի հպանցիկ հիշատակմանը, որը պետք է ամրապնդվեր հետագայում և դառնար այն իրողության առհավաստյան, համաձայն որի Խորենացին հրեա ասելով նկատի է ունեցել ոչ թե ազգությունը, այլ Բագրատունիների կրոնական պատկանելությունը: Գարագաշյանը ուշագրավ տեսակետ է արտահայտում նաև Բագրատունիներին վերագրված պաշտոնի՝ հայոց թագավորին թագադրելու իրողության վերաբերյալ՝ այն որակելով ոչ միայն հին և ընդունված սովորույթ հայոց մեջ, այլև՝ կրոնական արարողություն: Այս երևույթի պատմական ակունքները գալիս են այն ժամանակաշրջանից, երբ երկրի

¹⁵ Г. Х а л а т я н ц, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, ч. I. М., 1896, с. 83–84.

¹⁶ Ա. Շ ա հ ն ա գ ա ղ յ ա ն. Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը, Առանձնատիպ Պետական պատմական թանգարանի «Աշխատություններ», հ. 1-ից, Երևան, 1948, էջ 176–178:

¹⁷ Պաղեստինցի ասելով Խորենացին նկատի է ունեցել Բագրատունիների հրեական ծագումը, որը, փաստորեն, հերքվում է Բագրատունի Ենանոսի կողմից:

վրա իշխանությունը աստվածապետական էր, այսինքն՝ աշխարհիկ իշխանությունը գտնվում էր քրմի կամ մարգարեի ձեռքում: Երբ այն սահմանազատվեց, վերջիններս շարունակեցին իրենց ձեռքում պահել թագավորին պսակելու կամ օժելու արարողությունը: Թերևս այս է Գարագաշյանի կողմից Վահունիների հետ նրանց համեմատելու պատճառը: Այս ենթադրության հիմքը նաև «Բագրատունի» անվան առաջին «Բագ» բառն է, որը հնդեվրոպական շատ լեզուներում նշանակում է «Աստված»: Հեղինակը նույն կերպ է բացատրում «Վահունի» ցեղանունը, համաձայն որի «վահ» բառը «բագ»-ի մեկ այլ ձևն է և ունի նույն նշանակությունը¹⁸:

Ինչպես տեսանք, վերոհիշյալ գիտնականները Բագրատունիներին վերագրում են բացառապես հայկական ծագում՝ վերջիններիս նախահայրը համարելով Կիլիկիայի և Ասորիքի կառավարիչ Բագարատին: Նույն տեսակետն ունի նաև Ասլան Շահնազարյանը: Նա, վկայակոչելով ուրարտագետներին, համաձայն որոնց ուրարտերենում «ունի» բառը նշանակում է «տոհմ», և իր այդ նույն իմաստը պահպանել է նաև հայերենում՝ որպես հատուկ անունների վերջածանց, իշխանական տան անվանման բացատրությունը կապեց իշխանական տոհմի ազգանվան կազմությամբ, որը բաղկացած է «Բագարատ» և «ունի» բառերից, հետևապես Բագրատունի, ըստ Ա. Շահնազարյանի, կնշանակի Բագրատի տոհմ: Սակայն, այդ իրողությունը ամենին չէր պարտադրում Բագրատունիներին՝ ունենալ ուրարտական ծագում, ինչպես կարծում են որոշ մասնագետներ¹⁹ (այդ կարծիքներին կանդրադառնանք ստորև):

Բագրատունիների ծագման վերաբերյալ իր տեսակետն է արտահայտել Ն. Մառը: Նա նախ և առաջ ուսումնասիրության ենթարկեց Բագրատունիների մոտ առավել հաճախ հանդիպող անունները: Հետազոտության արդյունքում Աշոտ, Սմբատ, Գագիկ անունները առավել կապված համարվեցին հաբեթական աշխարհի հետ և ավելի թույլ իրանականի: Ինչ վերաբերում է Բագրատունիների ծագման վերաբերյալ առաջացած երկվությանը, ապա Մառն այն կապում է հայ հասարակության նախասիրությունների փոփոխման հետ: Համաձայն որի, հին ավանդությունների կրողները Բագրատունիներին կապում էին տեղական ցեղերի հետ, մյուսները՝ նոր՝ քրիստոնեական հայացքների կրողները, նախապատվությունը տալիս էին նրանց՝ աստվածաշնչյան Դավթից սերելուն²⁰: Այս տեսակետը և Բագրատունիներին վերագրված «հրեական» ծագումն իր արտացոլանքը գտավ հատկապես Վրաստանում, որտեղ հաստատված Բագրատունիների մի ճյուղը հասել էր թագավորական աստիճանի: Համաձայն վրացական աղբյուրների Բագրատունիների այս ճյուղը ազգակցական կապեր ուներ Դավիթ մարգարեի հետ, ինչը նշանակում էր ազգակից լինել Մարիամ Աստվածածնին²¹: Բագրատունիների վրացական ճյուղի ծագման վերաբերյալ

¹⁸ Ա. Գ ա ր ա գ ա շ յ ա ն. Քննական պատմություն հայոց, մաս Ա, Թիֆլիս, 1895, էջ 169-173:

¹⁹ Ա. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 193, 195-196, 212:

²⁰ Н. М а р р. Ани. Ереван, 1939, с. 41-42.

²¹ С м б а т Д а в и т и с - Д з е. История и повествование о Багратионах, пер., введ. и примеч. Лордкипанидзе М. Тбилиси, 1979, с. 12-14.

նման չափազանցությունն անհնարին համարելով՝ Յ. Մարկվարտը, Կ. Թումանյանը, Ն. Ադոնցը և այլ գիտնականներ՝ վրաց Բագրատունիներին սերած համարեցին հայ Բագրատունիներից²²: Տվյալ պարագայում վրաց Բագրատունիների նախահայրը հանդիսացավ Աշոտի որդի Վասակը: Խոսքը 732–750 թթ. Հայոց իշխան Աշոտ Կույրի որդի Վասակի մասին է, որը մասնակցել էր 774–775 թթ. ապստամբություններին և Բագրևանդի ճակատամարտից հետո անցնել էր Կղարջք և հիմնել Բագրատունիների վրացական ճյուղը: Մասնագետների արտահայտած այս տեսակետի աղբյուրագիտական հենքը Վարդան Արևելցու համապատասխան հիշատակությունն է²³:

Ներկայացվելիք մյուս գիտնականների կարծիքները նախորդներից տարբերվում են իրենց արտահայտած նոր տեսակետներով: Նրանցից ումանք Բագրատունիների ծագումը հասցնում են մինչև ուրարտական ժամանակաշրջան՝ վերագրելով նրանց մանայական ծագում: Տվյալ դեպքում Բագրատունիների նախահայր կարող էր հանդիսանալ Մանա երկրի թագավոր Բագադատին: Վերոհիշյալ տեսակետի պաշտպանողը Գրիգոր Ղափանցյանն է: Նրա մոտ հանդիպում ենք ոչ միայն Բագադատին, այլև Իրանգուին և Բագադատի նախորդ Մանա երկրի թագավոր Ագա Բ-ի մասին տեղեկությունների, որը հեղինակի ենթադրությամբ Բագադատի հայրն է, իսկ Իրանգուն՝ Ագայի հայրը՝ հետևապես Բագադատի պապը: Հարկ է նկատել, որ Բագադատին Բագրատունի համարելու դեպքում տոհմի նախահայր պետք է ընդունել ոչ թե նրան, այլ՝ Իրանգուին: Ստացվում է, որ Ուրարտական շրջանում մեզ հայտնի առաջին Բագրատունին Բագադատի փոխարեն դառնում է Իրանգուն: Ըստ Ղափանցյանի՝ Բագրատունիների նախնական հնարավոր բնակավայր կարող էր համարվել Մաննա կամ Մերձուրմյան երկիրը, որի թագավորն էր Բագադատին²⁴: Ադոնցը, ինչպես նշեցինք, մոտավորապես այս նույն վայրը, ավելի ճիշտ սրանից դեպի հյուսիս-արևմուտք ընկած Բագրևանդն էր ընդունում որպես Բագրատունիների նախահայրենիք:

Բագրատունիների ուրարտական շրջանում ունեցած հավանական գոյությունը ենթադրում է նաև Ռ. Մաթևոսյանը²⁵: Իբրև ապացույց՝ մատնանշում է Բագրատունիների զինանշանը, որն իր վրա կրում էր ուրարտական հերալդիկայի ազդեցության դրոշմ, ինչպես նաև՝ ուրարտական գլխավոր աստված Խալդեի կին Բագրարտուի անունը²⁶: Վերջինիս անունից էլ հավանական էր, որ առաջացած լիներ իշխանական տոհմի անվանումը: Մաթևոսյանը, Բագրատունիների՝ հավանական գոյությունը ուրարտական շրջանում ենթադրելուց զատ, անդրադարձավ նաև Բագրատունիների

²² Յ. Մարկվարտ, Կ. Թումանյան, Ն. Ադոնց, Վրական Բագրատունեաց ծագումը, գերմաներեն թարգ. Մ. Հապոզեանի, Վիեննա, 1913, էջ 122, С. Т о у м а н о в. Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, p. 203, Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա., էջ 442, 478, 484:

²³ Մեծին Վարդանայ Բարձրբերդեցու Պատմություն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 112:

²⁴ Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, հ. 1, Երևան, 1940, էջ 203, 219:

²⁵ Ռ. Մաթևոսյան, Բագրատունիներ, պատմա-տոհմաբանական հանրագիտարան, Երևան, 1997, էջ 65:

²⁶ Նույն տեղում:

իշխանական տոհմի ծագման հարցերի քննությանը՝ ներկայացնելով հայագիտությանը հայտնի տեսակետներն՝ ըստ ժամանակագրական հաջորդականության: Պատմաբանի ուսումնասիրության արդյունքում ամբողջությամբ հերքվեց Բագրատունիների հրեական ծագումը, անհավանական համարվեց նաև Շամբատի՝ Բագրատունիների նախահայր լինելը, քանի որ նրանք «Բագրատունի» կոչվելու փոխարեն կկոչվեին «Շամբատունի»: Բագրատունիների հայկական ծագումը Մաթևոսյանը փաստում է նաև Խորենացու հիշատակություններում հանդիպող հակասություններով²⁷:

Բագրատունիների ծագումնաբանության ուսումնասիրության մեջ նոր էջ բացեց անվանի կովկասագետ Կիրիլ Թումանովը: Նա առաջինն էր, որ խոսեց Բագրատունիների և Երվանդունիների հավանական ազգակցական կապի մասին²⁸: Սակայն վերջերս Վ. Վարդանյանի կողմից լույս ընծայված հոդվածում, կարծես, հերքվում է Թումանովի վերոհիշյալ տեսակետը: Ըստ Վարդանյանի, Թումանովի այդ ենթադրության պատճառն այն էր, որ նա Երվանդունիներին սերած է համարում Տորք Աստուց: Վերջինս, իր հերթին, նույնական լինելով Բագրատունիների նախահոր հետ, ակնարկված էր «բազա» բառով, քանի որ «Բագարատը» այդ աստվածությունը պաշտողների մականունն էր: Սակայն Վ. Վարդանյանը համերաշխելով Ս. Հարությունյանին, փաստում է, որ Երվանդ դիցանունը ծագել է ոչ թե Տորքից, այլ՝ հնդեվրոպական «perua-perwa» դիցանունից, հետևապես Բագրատունիները և Երվանդունիները ազգակից լինել չեն կարող: Նա Երվանդունիների և Բագրատունիների ազգակցությունը անհավանական համարեց նաև այն պատճառով, որ Երվանդ վերջինին և նրա եղբորը՝ քրմապետ Երվազին, սպանողներից մեկը Բագրատունի իշխան Սմբատն էր: Վ. Վարդանյանը վերջինիս Բագրատունի լինելու դեպքում քիչ հավանական էր համարում նրա այդ քայլը: Թեպետ, հարզեյի պատմաբանի նույն հոդվածում հանդիպում ենք Երվանդ վերջինի և նրա եղբոր քրմապետ Երվազի սպանության վերաբերյալ մեկ այլ ենթադրության: Ըստ Վ. Վարդանյանի, այդ սպանությունը կարող էր կապված լինել Բագրատունիների՝ պաշտամունքային ոլորտում ունեցած մեծ ազդեցությամբ, քանի որ Սմբատ Բագրատունին, սպանելով Երվազ Երվանդունուն, ոչ միայն վերացրեց Երվանդունի քրմապետերի իշխանությունը, այլև կարգեց նոր քրմապետ²⁹: Ցանկանում ենք առանձնակի ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ Թումանովը, բացի վերը հիշատակված փաստից, իր տեսակետը ապացուցում է նաև աշխարհագրական և տոպոնոմիկ (իմաստաբանական) տվյալներով: Խոսքը վերաբերում է Երվանդ Դ-ի (Ք. ա. 220–201 թթ.) կողմից Երվանդունիների վերջին մայրաքաղաք Երվանդաշատի մոտ կառուցած Բագարան և Երվանդավան քաղաքներին, ինչպես նաև դրանցից հարավ՝ Բագրևանդ գավառի Բագավան կենտրոնին, որը հա-

²⁷ Ռ. Մ ա թ և ն ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 55–65:

²⁸ Կ. Թ ու մ ա ն ո վ. Որոնդյանները Հայաստանում.– «Հանդես ամսօրյա», 1967, ապրիլ-սեպտեմբեր, էջ 195, 214–216, նաև С. Т о м а н о в f. Studies..., p. 318–320:

²⁹ Վ. Վ ա Ր Ղ ա ն յ ա ն. Բագրատունի տոհմի ծագմանը և գործառնություններին առնչվող մի քանի հարցերի շուրջը.– ՊԲՀ, 2008, № 1, էջ, 250–251, 253:

րավ–արևելքում սահմանակից էր Ծաղկոտն գավառին, որտեղ էլ գտնվում էր Անգղ ավանը: Հեղինակը բացի այն, որ Տորք Անգղը (Երվանդունիների աստվածությունը) համարեց ակնարկված «baga» բառով, իմաստաբանական առումով Բագարանին և Բագավանին համարժեք համարեց «Անգղը» և «Անգեղ տունը», որոնք բոլորն էլ համարվում էին Երվանդունիների սրբավայրերը: Վերը թվարկված փաստերին ավելացնում է նաև այն, որ Երվանդունի իշխանները, Բագրատունիների նման, կրում էին «Բագարատ» անունը, նկատի ունենալով Բագրևանդ գավառի (Բագարատի գավառ) իշխան Բագարատ Երվանդունուն, որի անունից էլ վերջինիս ժառանգական սեփականությունը ստացել է իր անվանումը՝ Բագրևանդ³⁰:

1965 թ. Չանգեզուրում հայտնաբերված Արտաշես Ա-ի (թ. ա. 189–160 թթ.) արամեերեն արձանագրությունը, որի բովանդակության ուսումնասիրությանը ձեռնամուխ եղավ Ա. Փերիխանյանը, լիովին փոխեց Բագրատունիների ծագումնաբանության ուսումնասիրության արդյունքները: Թագավորի վերոհիշյալ տիտղոսների կողքին՝ «Արտաշես թագավոր», «Երվանդունի», «Բարեպաշտ», «Զարեհի որդի», հիշատակված էր նաև «Նեկփառը»՝ իբրև «թագադիր», «Ախշահրսարտի որդի»: Վերոհիշյալ արձանագրությունը թույլ տվեց Ա. Փերիխանյանին եզրակացնելու, որ Նեկփառը Բագրատունի է, քանի որ կրում էր «թագադիր» տիտղոսը: Բացի այդ, Ա. Փերիխանյանը աղերս էր տեսնում Նեկփառ և միջին մեդական «Nēkfarr» անունների միջև³¹: Արձանագրության մեջ, ինչպես տեսանք, Նեկփառը հիշատակված էր իբրև որդի Ախշահրսարտի, հետևապես, մեզ հայտնի առաջին Բագրատունին ոչ թե նա է, այլ՝ Ախշահրսարտը: Մակայն Վ. Վարդանյանը հավաստիացնելով, որ Հայաստանում թագադրի պաշտոնը գոյություն է ունեցել դեռևս Արտաշես թագավորի կառավարման տարիներին և, վկայակոչելով սույն արձանագրությունը, այնուամենայնիվ հերքում է Նեկփառի Բագրատունի լինելը: Նա իրավամբ կասկածի է ենթարկում Ա. Փերիխանյանի այն տեսակետը, որ արձանագրությունը փաստում է Ն. Ադոնցի այն կարծիքը, որ Բագրատունիներն ունեն մեդական-ատրպատականյան ծագում, քանի որ Ն. Ադոնցը Բագրատունիներին ոչ թե մեդական-ատրպատականյան ծագում է վերագրել, այլն՝ Բագրատունիների դինաստիան համարել էր առաջացած Հայաստանի իրանական կամ ատրպատականյան ծայրամասում³²: Մեր կարծիքով՝ Նեկփառի վերոհիշյալ պաշտոնը՝ Արտաշես արքայի թագադիր լինելը, արդեն իսկ ապացուցում է Ա. Փերիխանյանի եզրակացությունը, որ նա Բագրատունի է, քանի որ Բագրատունիներից բացի այլ թագադիրներ մեզ հայտնի չեն: Նեկփառի Բագրատունի լինելը ապացուցվում էր նաև նրա անվան ծագմամբ, քանի որ, ինչպես վերը նշեցինք, այն նույնական էր միջին մեդական «Nēkfarr» անվանը: Ն. Ադոնցի ենթադրությամբ մոտավորապես նույնպիսի՝ պարթևական, ծագում ունի Բագարատ անունը: Այդ անվան հնագույն Բագարատա ձևին առաջին անգամ հանդիպում ենք բուն Պարսկաստանում, այսինքն՝

³⁰ Գ. Թ ո ռ լ մ ա ն ն վ. նշվ. աշխ., էջ 195, 214–216, նաև С. Т о u m a n o f f. Studies..., p.318–320:

³¹ А. П е р и х а н я н. Армянская надпись из Зангезура.– ՊԲՀ, № 4, 1965, էջ 108, 110–111:

³² Վ. Վ ա Ր Պ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 257:

Փարսիստանում ք. ա. 220 թ.³³: Բացի այդ, ամեննին պարտադիր չենք համարում, որ բոլոր Բազրատունիներն ունենան՝ Բազարատ, Աշոտ, Գագիկ և նման անուններ, որոնք, սովորաբար, կրում էին Բազրատունիները: Պատմաբանների հաջորդ սերնդին էր միայն վիճակված՝ երկար պրպտումների և ուսումնասիրությունների արդյունքում կատարել մինչ այդ պատմագիտությանը անհայտ եզրակացություններ:

Ս. Երեմյանն այն պատմաբաններից էր, որ կարողացավ նորովի ներկայացնել Մովսես Խորենացու՝ Շամբատի «հրեական» ծագումը: Անանունի հիշատակած Բազարատ Փառազյանը, որն, ըստ հեղինակի, նույն ինքը՝ «Շամբատայ Բազարատն», Տրդատ Ա Արշակունու ժամանակակիցն էր: Բազարատ Փառազյանը՝ «Շամբատայ Բազարատը», Ադիաբենի թագավորների նման ընդունել էր հրեական կրոնը (ավելի ճիշտ՝ նախնական քրիստոնեության ուսմունքներից մեկը) և որպես թագադիր ասպետ ու հայ ավագանու անդամ՝ մասնակցել Տրդատի՝ Մեծ Հայքի թագավոր հռչակվելու արարողությանը: Ըստ Ս. Երեմյանի՝ այս Բազարատը գլխավորում էր պարթևների կողմնակից հայ մեծամեծներին և նրանց հետ ապաստանել էր Մծբինում³⁴: Այս եզրակացությունը կիսում է նաև Հ. Մելքոնյանը³⁵, սակայն կարծում ենք՝ նա թեմայի վերաբերյալ արտահայտում էր երբեմն միմյանց հակասող կարծիքներ: Օրինակ՝ «Կարծում ենք, որ Խորենացին ճիշտ է, երբ գրում է, որ նա (Շամբատը – Ս. Գ.) հայ չէր, այլ հրեա և գուցե նա հրեական նոր կրոնն ընդունած, ծագումով հայ ադիաբենցի էր, և կամ պարթևական ծագումով՝ Ադիաբենի մեծամեծներից կամ գորավարներից մեկը, որը դեռ շատ վաղուց Ադիաբենի թագավոր Իզատեսի կամ թագուհի Հեղինեի հետնորդությամբ ընդունել էր հրեական նոր վարդապետությունը և առաջին իսկ օրից հավատարմաբար ու անձնուրացաբար համագործակցելով Տրդատի հետ եկել էր Հայաստան»³⁶: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Հ. Մելքոնյանի տեսակետն այն առումով, որ գուցե Շամբատը Ադիաբենից եկած այն գորավարներից մեկն էր, որ դեռ Ադիաբենեում եղած ժամանակ ընդունել էր հրեական նոր ուսմունքներից՝ քրիստոնեական վարդապետությունը, կամ Բազրատունիների շնորհիվ I դ. երկրորդ կեսին քրիստոնեական վարդապետության առաջին ծիլերը բերվել են Հայաստան և, անկասկած, հետզհետե նրանց միջոցով էլ այստեղ կազմավորվել է քրիստոնեական համայնքներից մեկը³⁷:

Գտնում ենք՝ Ս. Երեմյանի կարծիքը, որը կիսում է նաև Հ. Մելքոնյանը, լիովին ընդունելի կարելի է համարել, քանի որ աղբյուրագիտական հիշատակությունը վկայում է այն մասին, որ պարթևների թագավոր Վադարշ I-ի հրամանով հայոց թագավոր Տրդատ I-ին սատարող Մոնես գորավարը, գալով Հայաստան, իր հետ ունեցել էր ադիաբենական գորամա³⁸: Հավա-

³³ Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Ա., էջ 494:

³⁴ Հայ ժողովրդի պատմություն, հ. Ա, Երևան, 1971, էջ 747:

³⁵ Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 131–132:

³⁶ Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 132:

³⁷ Նույն տեղում, էջ 134:

³⁸ К о р н е л и й Т а ц и т. Сочинения в двух томах, т. I. Л., 1970, с. 280.

նական ենք համարում, որ հենց այդ գործնասի հետ Հայաստան եկած լիներ նաև Բագարատը:

Ի մի բերելով Բագրատունիների ծագման վերաբերյալ վերը ներկայացված թե՛ աղբյուրագիտական վկայությունները, թե՛ հայագիտությանը հայտնի տեսակետները՝ գալիս ենք եզրահանգման՝ համաձայն որի, առավել հավաստի է Անանունի՝ Բագրատունիների բացառապես հայկական ծագման հիշատակումը: Ինչ վերաբերում է Փառնավազի իսկության բացահայտմանը, հարկ է նկատել, որ Անանունից բացի Փառնավազին ծանոթ է եղել նաև Մովսես Խորենացին: Նրան Խորենացին հիշատակում է Մարաց թագավորների հետ համապատասխան հերթականությամբ հայոց թագավորներին թվարկելիս:

Մարաց թագավորներ

Վարբակէս

Մօղակիս

Սօսարժօս

Առտիկաս

Դէովկիս

Փռաւորտիս

Կւաքսարէս

Աժդահակ

Հայոց թագավորներ

Պարոյր, որդի Սկայորդույ

Հրաչեայ

Փառնաւազ

Պաճոյճ

Կոռնակ

Փառոս

Միւս Հայկակ

Երուանդ սակաւակեաց

Տիգրան³⁹

Այստեղ Փառնավազը հանդես է գալիս որպէս Հրաչյա թագավորի հաջորդ, հետևապէս Փառնավազի ու Հրաչյայի միջև ժամանակագրական մեծ տարբերություն չէր կարող լինել: Խորենացուց մեզ հայտնի է նաև, որ Հրաչյան Նաբուգոդոնոսորի ժամանակակիցն էր: Հենց այս նույն ժամանակաշրջանում ենք հանդիպում նաև Անանունի մոտ հիշատակված Փառնավազին: Ժամանակագրական նույնությունը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ երկու դեպքում էլ խոսքը միևնույն անձի մասին է: Միակ տարբերությունը այն է, որ Խորենացին Փառնավազից հետո է հիշատակում այլ անձանց, մինչդեռ Անանունը Փառնավազից անմիջապէս հետո հիշում է Բագամին, Բագարատին և այլոց: Կարծում ենք՝ սա ունի իր բացատրությունը. Մովսես Խորենացու կողմից Անանունի օրինակով Փառնավազին Բագամից և Բագարատից հետո հիշատակելը կվկայեր ոչ միայն նրանց ազգակից լինելը, այլև այդպիսով կփաստվեր տոհմի հայկական ծագումը: Պատահական չպետք է համարել նաև երկու պատմիչների մոտ հանդիպած՝ թագավորին դիմավորելու և նրանից համապատասխան շնորհներ ստանալու նկարագրությունը: Միակ տարբերությունն այն է, որ Խորենացու մոտ հանդես է գալիս «Շամբատայ Բագարատը» և Վաղարշակ թագավորը, իսկ Անանունի մոտ՝ Բագարատ Փառազյանը և Արշակ Փոքրը: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ խոսքը վերաբերում է միևնույն իրադարձությանն ու անձանց: Ստացվում է, որ «Շամբատայ Բագարատը» և Բագարատ Փառազյանը միևնույն անձն են: Այս տեսակետը ժամանակին

³⁹ Մ ո վ ու է ու Խ ո ռ է ն ա զ ի, էջ 67-69:

պաշտպանել են Ս. Երեմյանն և Ն. Մելքոնյանը, ինչպես վերը նշվեց: Ինչ վերաբերում է Վաղարշակ թագավորին և Արշակ Փոքրին⁴⁰, ապա կարծում ենք, որ նրանց իսկության բացահայտումը դուրս է մեր ուսումնասիրության շրջանակներից: Ն. Ադոնցի այն կարծիքը, որ Անանունի հիշատակած Բագարատ Փառագյանը չէր կարող հանդես գալ մե՛կ Ք. ա. VII դարում և մե՛կ էլ պարթև Արշակունի թագավորի Մծբին գալու ժամանակ՝ մոտավորապես Ք. հ. II դարի կեսերին⁴¹, պետք է պարթև Տրդատ Ա Արշակունի թագավորին օձող Բագարատ Փառագյանին կամ «Շամբատայ Բագարատին» ընկալել ոչ թե անմիջապես Փառնավազի որդի, այլ՝ նրա սերունդներից: Անանունը, որպեսզի պահպաներ Բագարատի ունեցած կապը Փառնավազի հետ, նրան ներկայացրել էր իբրև «Բագարատ Փառագեան»:

1960–70-ական թվականներին հայագիտության մեջ կատարված նվաճումները եկան հերքելու նախկինում ամրապնդված այն տեսակետը, համաձայն որի Բագրատունիների նախահայրը Ասորիքի և Կիլիկիայի կառավարիչ Բագարատն է: Այս ամենը պայմանավորված էր նրանով, որ, ինչպես վերը նշվեց, գիտությանը շուտով հայտնի դարձավ մի նոր Բագրատունի՝ Նեփառ թագադիրը՝ Ախշահրսարտի որդին: Համաձայն ենք Ռ. Մաթևոսյանի տեսակետին առ այն, որ մեզ հայտնի առաջին Բագրատունին Ախշահրսարտն է⁴²: Փաստորեն Բագրատունիների՝ Ք. ա. II դարում գոյությունը դառնում է գիտականորեն ասպացուցված: Իսկ տոհմի, ուրարտական շրջանում հավանական գոյությունը, մեր կարծիքով, առանձին ուսումնասիրության թեմա է և անհրաժեշտություն ունի լուրջ քննության: Ինչ վերաբերում է Սովսես Խորենացու կողմից Բագրատունիներին վերագրված «հրեական» ծագմանը, ապա՝ կարծում ենք, որ պատմահայրը չէր կարող իր մեկենասի տոհմին վերագրել օտար ծագում, այն առավելապես պայմանավորված էր Բագրատունիներին ազնվական ծագում վերագրելու պատմահոր միտումով: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչպես Հայոց թագավոր Հրաչյան, Շամբատին Նաբուգոդոնոսորից ազատելով, բնակեցրել էր Հայաստանում այն էլ, ըստ պատմիչի, «մեծ պատվով»: Ինչու՞ էր Հայոց թագավորը նման պատվի արժանացնում «հրեա» ստրուկին: Մեր համոզմամբ Խորենացու մոտ հանդիպում ենք այն երևույթի ցայտուն դրսևորմանը, որը բնորոշ էր հին աշխարհին և միջնադարին՝ ազգությունը հաճախ կրոնական պատկանելությանը պայմանավորելը: Հին աշխարհում այս երևույթի դրսևորումը փաստում է նաև Ս. Երեմյանը: Նա վերլուծության ենթարկելով պարսից թագավոր Շապուհ Բ (309–379 թթ.) Երկարակյացի կողմից Հայաստանի քաղաքներից բնակչության տեղահանության մասին Փավստոս Բուզանդի վկայությունները՝ հավաստում է, որ պատմիչը ցուցաբերել է կրոնադավանաբանական մոտեցում: Ս. Երեմյանի պնդմամբ, «հայեր» ասելով՝ պատմիչը նկատի է ունեցել նաև սիրիացի-

⁴⁰ Այս մասին առավել մանրամասն տե՛ս, Ս ե բ է ո ս, ծանոթ. 66, էջ 206–207, Գ. Մ ա ր գ ա յ ա ն. Սովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, էջ 127–128:

⁴¹ Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Ա., էջ 495:

⁴² Ռ. Մ ա թ և ո ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 10:

ներին, հույներին և այլ քրիստոնյա ազգերին, իսկ «հրեա» ասելով՝ հրեական կրոնի՝ քրիստոնեության նախնական ուսմունքներից մեկի հետնորդներին⁴³: Բացի այդ, հաճախ ազգությունը էթնիկական նշանակությունից զատ կարող էր ունենալ նաև բարոյական վարքագծի բնութագրման երանգ, ինչպես նաև՝ իր վրա կրել կրոնական հակադրության իմաստ⁴⁴: Ռ. Մանասերյանը, իր հերթին փաստելով հին աշխարհում և միջնադարում Հայաստանում պրոզելիտիզմի՝ նորադարձության, առկայության մասին, վկայակոչում է Բագրատունիներին վերագրված հրեական ծագումը: Բացի այդ, նա, ուսումնասիրության ենթարկելով Շամբաթ անվանումը, այն նույնացնում է հռոմեական ժամանակաշրջանում ընդունված Սամբատիոն, կամ Սանբատիոն, Սաբատիոն անուններին: Ռ. Մանասերյանի կատարած հետազոտության արդյունքում Բագարատ անունը համարվեց ոչ թե սեմիտական, այլ՝ իրանա-հնդեվրոպական: Այդ թույլ տվեց պատմաբանին ենթադրելու, որ իշխանական տոհմը ունի տեղական ծագում⁴⁵:

Վերոհիշյալ տեսակետները փաստում են, որ Խորենացու կողմից Բագրատունիներին վերագրված «հրեական ծագումը» չպետք է հասկանալ բարոյի ուղիղ իմաստով, այլ՝ որպես տոհմին վերագրված բարձր և ազնվական ծագման հավաստում, ինչն ընդունված կարգ էր թե՛ օտար և թե՛ հայ պատմիչների մոտ: Սույն մոտեցմանը հանդիպում ենք նաև Կոստանդին Ծիրանածինի՝ իբերների ծագմանը վերաբերող հիշատակություններում. «Իբերների կուրապաղատները, ցանկանալով իրենց վեհացնել ասում են, թե սերում են թագավոր Դավիթ մարգարեի հարձից՝ Ուրիայի (կին Բերսաբեից): Նրանք գտնում են, թե Դավթի՝ նրանից ունեցած երեխաներից են սերում և որ իրենք Դավիթ թագավորի և մարգարեի ազգականներն են, հետևաբար ամենասուրբ աստվածածնի, քանի որ վերջինս Դավթի սերնդից էր»⁴⁶: Հայ պատմագրության մեջ սույն ավանդույթի դրսևորմանը հանդիպում ենք նաև Ջաքարյանների իշխանական տոհմի ազգային պատկանելությունը վկայող հիշատակություններում, որոնց համաձայն վերջիններս ունեին «քրդական» ծագում: Հ. Մարգարյանը, քննության առնելով Ջաքարյաններին վերագրված քրդական ծագումը, եզրակացրեց, որ այն փաստող վկայությունների հիմքում ընկած է Խորենացուց եկող հիշյալ ավանդույթը: Բացի այդ, Հ. Մարգարյանը նույնացրեց «մար» և «քուրդ» էթնոնիմները, համարելով դրանք հոմանիշներ՝ հանգեց այն եզրակացությանը, որ XIII դարում հայ պատմագրության մեջ որևէ իշխանական տոհմին մարական-քրդական ծագում վերագրելը նշանակում է՝ այդ տոհմի ակունք-

⁴³ С. Е р е м я н. Развитие городов и городской жизни в древней Армении.– Вестник древней истории, 1953, № 3, с. 24–25.

⁴⁴ Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Ջաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ.– ՊԲՀ, 1992, № 2–3, էջ 146–147:

⁴⁵ Р. М а н а с е р я н. К вопросу о вероисповедании населения городов Армении (I в. до н. э.).– ՊԲՀ, 1989, № 2, с. 202.

⁴⁶ Օտար աղբյուրներ Հայաստանի և հայերի մասին, Բյուզանդական աղբյուրներ, Բ, Կոստանդին Ծիրանածին, թարգմանություն բնագրից և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1970, գլ. 45, էջ 13:

ները փնտրել հնագույն մարական ժամանակներից, իսկ «մար» համարվելը ցույց է տալիս Աժդահակից, այսինքն՝ արքայական տոհմից սերել⁴⁷:

Այսպիսին են Բագրատունիների ծագման վերաբերյալ մինչ այս հայագիտությանը հայտնի տեսակետները, որոնցից յուրաքանչյուրը լուրջ ուսումնասիրությունների և քննարկումների տեղիք են տալիս: Դրանց մի մասը թեև ենթադրություններ է, սակայն գիտնականների կողմից առավել մանրամասն ուսումնասիրությունների արդյունք ու գիտական փաստերով ապացուցված տեսակետներ են:

К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ БАГРАТУНИ

МАРИАМ ГРИГОРЯН

Р е з ю м е

Изучение вопроса о происхождении княжеского дома Багратуни приводит к выводу, что этот княжеский дом полностью имеет армянское происхождение. Версия о еврейском происхождении Багратуни, которую обозначил Мовсес Хоренаци, есть факт того, что в древнем мире и средневековой Армении существовал прозелитизм. Вполне возможно, что христианское вероучение распространялось в Армении еще и с помощью Багратуни из Адиабене, а первым представителем из дома Багратуни является Ахшахрсарт – отец венцезолагателя Никефора. Что касается существования дома Багратуни еще в эпоху Урарту, то этот вопрос нуждается в дополнительном изучении и подтверждении.

ABOUT THE ORIGIN OF THE BAGRATUNIS

MARIAM GRIGORYAN

S u m m a r y

Studying the question of the origin of the princely house Bagratuni we come to the conclusion that the princely house is entirely of Armenian origin. The version of the Jewish origin of the Bagratunis which marked M. Khorenatsi is the fact that in ancient world and medieval Armenia existed proselytism. We consider it quite possible that the Christian faith was spread in Armenia also by the help of the Bagratunis of Adiabene and the first representative from the house of the Bagratunis was father of coronater Nikefor – Akhshahrsart. As regards the existence of the house of the Bagratunis in the era of Urartu, this issue needs further research and confirmation.

⁴⁷ Հ. Մ ա թ ա թ յ ա ն ի ն շ լ. ա շ ի., էջ 149: